ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

**Հաստատված է ամբիոնի նիստում**

_Մանկավարժություն և հոգեբանություն_
ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ _Լ.Գ. Բաղդասարյան_ /Ա.Ա.Հ/

Արձանագրություն № _14_

«_06_» _02_ 2024_ թ.

_ ՄՀ/բ-057 Տարիքային և մանկավարժական հոգեբանության **ԴԱՍԸՆԹԱՑԻ**
Դասիչ, դասընթացի անվանում

# ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹ

**Մասնագիտություն՝** 011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

**Կրթական ծրագիր՝** 011401.04.6 Ֆիզիկա
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

**Որակավորման աստիճան՝** մանկավարժության բակալավր
/բակալավր, մագիստրատուրա/

**Ամբիոն՝** _մանկավարժություն և հոգեբանություն_
/ամբիոնի լրիվ անվանումը/

**Ուսուցման ձևը՝** ___առկա___
/առկա, հեռակա/

**Կուրս/կիսամյակ** առկա ___ 3-րդ կուրս, 2-րդ կիսամյակ___

**Դասախոս(ներ)՝** _ մ.գ.թ., դոցենտ_**Զ. Գրիգորյան** ___
/անուն, ազգանուն/

Էլ. հասցե/ներ **_grigzara@yahoo.com**___

Վանաձոր- 2024թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 3
2. Դասընթացի նպատակը և խնդիրները . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 3
3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 4
4. Դասընթացի կրթական վերջնարդյունքները . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 5
5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 7
6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը 8
7. Ուսումնական աշխատանքները տեսակները 8
8. Դասավանդման մեթոդներ. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 11
9. Ուսումնառության մեթոդները . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 11
10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 13
11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 14
12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ. 16
    - 12. 1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ………………. 16
    - 12. 2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 19
    - 12. 3. Լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական քարտ. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .
    - 12. 4. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ
13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում. . . . . . . . . . . . . . . . . . . .
14. Գնահատում. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 25
    - 14. 1. Ուսանողների գիտելիքների ստուգում. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .
    - 14. 2. Հարցաշար. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .
    - 14. 3. Գնահատման

չափանիշներ. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .
15. Դասընթացի համառոտ նկարագրիչ. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 27

## ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

**1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում[1].**

«Տարիքային և մանկավարժական հոգեբանություն» դասընթացը կարևորվում է մանկավարժության բնագավառում մասնագետների պատրաստման գործընթացում, ներառված է կրթական ծրագրի ուսումնական պլանի «մասնագիտական» կրթամասում:

**2. Դասընթացի նպատակը և խնդիրները.**

*2.1 Դասընթացի նպատակն է* ընդլայնել ուսանողների մասնագիտական առարկայական ոլորտին սերտ առնչվող հոգեբանական գիտելիքների շրջանակը, նպաստել օնտոգենեզում երեխայի, զարգացող մարդու հոգեկանի զարգացման դինամիկայի, ինչպես նաև ուսուցման և դաստիարակության գործընթացում արդի մանկավարժական տեխնոլոգիաների հոգեբանական հիմքերի, մանկավարժական գործունեության և մանկավարժի անձնային հոգեբանական առանձնահատկությունների ու ներկայացվող ժամանակակից պահանջների ըմբռնմանը, նրանց մոտ աշխատանքային կոմպետենցիաների, կարողությունների ու հմտությունների ձևավորմանը:

*2.1. Դասընթացի խնդիրներն են*

- Ծանոթացնել «Տարիքային և մանկավարժական հոգեբանության» առարկայի բովանդակությանը, խնդիրներին, հետազոտման մեթոդներին
- Քննարկել ժամանակակից տեսական մոտեցումները երեխայի հոգեկանի օնտոգենետիկական զարգացման մասին
- Վերլուծել հոգեկանի զարգացման օրինաչափությունները, մեխանիզմները, յուրաքանչյուր տարիքին բնորոշ առաջատար գործունեության տեսակները, հոգեկան նորագոյացությունները, ճգնաժամերը
- Քննարկել անձի կոգնիտիվ, պահանջմունքա-դրդապատճառային, հուզակամային ոլորտների զարգացման առանձնահատկությունները ուսուցման և դաստիարակության ընթացքում տարիքային կտրվածքով
- Ծանոթացնել ուսուցման և դաստիարակության հոգեբանական հիմքերին, ժամանակակից տեխնոլոգիաներին
- Ներկայացնել մանկավարժական գործունեության և ուսուցչի անձնավորության հոգեբանական առանձնահատկությունները

**3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները**

[1] Ներկայացվում է դասընթացի կարևորությունը տվյալ կրթական ծրագրի խնդիրների լուծման հարցում և տեղը ուսումնական պլանում ըստ կրթաբլոկների

**«Տարիքային և մանկավարժական հոգեբանություն»** դասընթացին մասնակցելու նախապայմանն այն է, որ ուսանողներն ընդհանուր գիտելիքներ ունենան ընդհանուր հոգեբանությունից, ֆիզիոլոգիայից, մանկավարժությունից, փիլիսոփայությունից, սոցիոլոգիայից: Տարիքային հոգեբանության ուսումնասիրման ժամանակ հոգեբանական գիտելիքների կիրառական նշանակության ամրապնդման նպատակով ուսանողները պետք է կարողանան ռեալ պատկերացնել առարկայի կարևորությունը, նրա տեսական և պրակտիկ հայեցակերպերը:

4. **Դասընթացի կրթական վերջնարդյունքները**

**Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը.**

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

***Գիտենա*** - «Տարիքային և մանկավարժական հոգեբանությու»ն առարկայի բովանդակությունը, խնդիրները, հետազոտման մեթոդները, երեխայի հոգեկանի օնտոգենետիկական զարգացման տեսական հայեցակարգերը, հոգեկանի զարգացման մեխանիզմները, օրինաչափությունները, շարժիչ ուժերը, ճգնաժամերը, յուրաքանչյուր տարիքիքն բնորոշ առաջատար գործունեության տեսակները, հոգեկան նորագոյացությունները, հոգեբ. առանձնահատկությունները, անձի հոգեկանի զարգացման առանձնահատկությունները ուսուցման և դաստիարակության ընթացքում, ուսուցման դաստիարակության ժամանակակից տեխնոլոգիաների հոգեբանական հիմքերը, մանկավարժական գործունեության և ուսուցչի անձնավորության հոգեբ. առանձնահատկությունները:

***Տիրապետի*** - երեխայի հոգեկանի և վարքագծային զարգացման դինամիկայի ըմբռնման և հետազոտման մեթոդներին, ուսումնադաստիարակչական գործընթացում ժամանակակից տեխնոլոգիաների իրականացման հմտություններին, անձնավորության զարգացման գործընթացների արդյունքների կանխատեսման գործիքակազմին:

***Կարողանա*** - իրականացնել հանրակրթական ուսումնական հաստատություններում երեխայի հոգեկանի զարգացմանը վերաբերող տեսական գիտելիքների կիրառումը, յուրաքանչյուր տարիքի ճանաչողական գործընթացների, հուզակամային, պահանջմունքադրդապատճառային ոլորտների, անձնային որակների առանձնահատկությունների հիման վրա կիրառել ախտորոշելու, բնութագրելու հմտությունները:

**Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ կոմպետենցիաները.**

*Դասընթացի ուսուցման գործընթացը ուղղված է հետևյալ*

*-ընդհանրական գործիքային կոմպետենցիաների (այսուհետ ԳԿ) ձևավորմանը.*

- վերլուծելու և սինթեզելու ունակություն,
- կազմակերպելու և պլանավորելու ունակություն,

- հենքային և ընդհանուր գիտելիքներ,
- մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ,
- տեղեկատվությունը կառավարելու ունակություն,
- մանկավարժական խնդիրների լուծում,
- որոշումների ընդունում:

*-ընդհանրական միջանձնային կոմպետենցիաների (այսուհետ ՄԶԿ) ձևավորմանը.*

- քննադատական վերլուծության և ինքնաքննադատման ունակություն,
- թիմային աշխատանք,
- միջանձնային ունակություններ,
- միջառարկայական թիմում աշխատելու ունակություն,
- այլ ոլորտների փորձագետների հետ շփվելու ունակություն,
- բազմաձևության և բազմամշակութայնության ընդունում,
- միջազգային միջավայրում աշխատելու ունակություն,
- բարոյական արժեքներ:

*ընդհանրական համակարգային կոմպետենցիաների (այսուհետ ՀԳԿ) ձևավորմանը:*

- գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն,
- հետազոտություններ կատարելու ունակություններ,
- սովորելու ունակություն,
- նոր իրավիճակներին հարմարվելու ունակություն,
- նոր գաղափարներ առաջ քաշելու (ստեղծագործելու) ունակություն,
- առաջնորդի հատկություններ,
- ինքնուրույն  աշխատելու ունակություն,
- նախագծեր մշակելու և դրանք կառավարելու ունակություն,
- նախաձեռնողականություն և ձեռներեցություն,
- որակի կարևորության գիտակցում,
- հաջողության ձգտում:

*առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաների (այսուհետ ԱԿ) ձևավորմանը:*

- դրսևորել մասնագիտության պատմության և հիմունքների իմացություն,

•հստակ հաղորդել ստացված հենքային գիտելիքները,

•համապատասխան համատեքստում ընկալել և մեկնաբանել նոր տեղեկատվությունը,

•ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,

•հասկանալ և օգտագործել քննադատական վերլուծության տեսությունների զարգացման մեթոդները,

•ցուցաբերել ուսումնասիրման ոլորտում հետազոտությունների որակի իմացություն,

•դրսևորել ժամանակակից խոր գիտելիքներ մասնագիտական ոլորտում,

•քննադատորեն գնահատել և մեկնաբանել տեսության ու պրակտիկայի նորագույն ձեռքբերումները,

•տիրապետել ինքնուրույն հետազոտության մեթոդներին և կարողանալ մեկնաբանել հետազոտության արդյունքները,

•ունակ լինել ուրույն, թեկուզ և փոքր ներդրում կատարելու տվյալ առարկայական ոլորտում,

•ցուցաբերել ինքնուրույնություն և ստեղծագործական մոտեցում տվյալ առարկայական ոլոտում գործունեություն ծավալելիս,

•տիրապետել տվյալ մասնագիտական մակարդակում պահանջվող կոմպետենցիաներին:

*Դասընթացի ընթացքում կիրականանա ծրագրի ավարտական պահանջներով նախատեսված հետևյալ ուսուցչական կոմպետենցիաների զարգացումը.*

•հանձնառություն սովորողների առաջադիմության և ձեռքբերումների նկատմամբ (Ու1),

•ուսուցման ժամանակակից մեթոդները և տեխնոլոգիաները ուսումնասիրելու, ներդնելու կարողություն (Ու2),

•առարկայական գիտելիքներին տիրապետելու կարողություն (Ու4),

•ուսուցման բարենպաստ միջավայր ստեղծելու կարողություն (Ու5),

•ժամանակը արդյունավետ օգտագործելու  հմտություն (Ու6),

•սեփական գործունեության արդյունքները գնահատելու և վերլուծելու կարողություն (Ու7),

• մասնագիտական կատարելագործման անհրաժեշտության գիտակցում (Ու8):

5. **Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների**[2].

«Տարիքային հոգեբանություն» դասընթացից ձեռք բերված գիտելիքներն և հմտությունները շրջանավարտը կարող է կիրառել մասնագիտական գործունեության ընթացքում, տարբեր սոցիալական խմբերի հետ աշխատանքում և մանկավարժության բնագավառում գիտական հետազոտություններ կատարելու նպատակով:

6. **Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը**

| Չափանիշ | Առկա ուսուցման համակարգ | Հեռակա ուսուցման համակարգ |
|---|---|---|
| Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ) | 2 կրեդիտ/60ժամ | |

| Աշխատանքի տեսակը | ժամաքանակ | ժամաքանակ |
|---|---|---|
| Դասախոսություն | 10 | |
| Գործնական աշխատանք | | |
| Սեմինար պարապմունք | 14 | |
| Լաբորատոր աշխատանք | | |
| Ինքնուրույն աշխատանք | 36 | |
| **Ընդամենը** | 60 | |
| Ստուգման ձևը (ստուգարք/ ընթացիկ քննություն/ հանրագումարային քննություն) | ստուգարք | |

7. **Ուսումնական աշխատանքների տեսակները**[3] .

[2] Նշվում է, թե տվյալ դասընթացի յուրացման, ամփոփման արդյունքում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները աշխատաշուկայի որ բնագավառներում և ոլորտներում կարող է շրջանավարտը կիրառել
[3] Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

• **Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:

• **Գործնական աշխատանքների** ժամանակ ուսանողը կատարում է լսարանային աշխատանք՝ դասախոսի անմիջական ղեկավարման ներքո: Գործնական պարապմունքները անցկացվում են գործնական խնդիրների լուծման, առաջադրանքների իրականացման, թեստերի, իրավիճակային վերլուծությունների, գործարար խաղերի, խմբային աշխատանքների, տնային առաջադրանքների, ուղեղային գրոհների, ինտերակտիվ ուսուցման միջոցով՝ տեսական գիտելիքները կիրառելու, գործնական ունակությունների և հմտությունների ձեռքբերման և ամրապնդման նպատակով: Դասախոսն առաջադրում է գործնական պարապմունքների թեման, նպատակը, խնդիրները, այն հարցերը, որոնք պետք է լուծել գործնական պարապմունքի ընթացքում, գործնական պարապմունքի անցկացման մեթոդները և պատասխանում է ուսանողների տված հարցերին:

• **Սեմինար պարապմունքները** խմբային պարապմունքների հիմնական տեսակներից է, որի ընթացքում ուսանողը սովորում է բանավոր շարադրել նյութը, պաշտպանել իր տեսակետները և եզրահանգումները: Սեմինարի ընթացքում ուսանողները քննարկում, պատասխանում են թեման, զեկույցները և ռեֆերատները, որոնք հանձնարարել է դասախոսը:

Սեմինարին պատրաստվելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել հիմնական և լրացուցիչ գրականություն տվյալ թեմայով: Գրականության ուսումնասիրությունից

և համառոտագրումից հետո պետք է կազմել պլան՝ բանավոր պատասխանի համար, ապա մտածել ելույթի բովանդակությանհարցադրումների և պատասխանների մասին:

• **Լաբորատոր աշխատանքները** նպաստում են տեսական նյութի առավել լավ յուրացմանը և ամրապնդմանը: Լաբորատոր աշխատանքները նպատակ ունեն ամրապնդելու ուսումնասիրվող թեմաների տեսական դրույթները, ուսանողներին ուսուցանելու փորձարարական հետազոտությունների մեթոդները, հաղորդելու ինքնուրույն վերլուծության, տվյալների ամփոփման, լաբորատոր սարքավորումների, համակարգիչների, սարքերի, էլեկտրոնային ծրագրերի հետ աշխատելու փորձ և հմտություններ: Լաբորատոր աշխատանքն անցկացման համար ուսանողը պարտավոր է ուսումնասիրել թեմային վերաբերող տեսական նյութը (դասախոսւթյուն, համապատասխան գրականություն) և փորձի, հետազոտության մեթոդոլոգիան:

Դասախոսի հսկողությամբ ուսանողը իրականացնում է փորձը, հետազոտությունը, գրանցում է արդյունքները և կատարում (գրանցում) համապատասխան եզրակացություն

• **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են[4]՝

▪ **Ռեֆերատ** – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):

**Գործարար խաղեր** – պայմանական իրավիճակներում սոցիալ-տնտեսական համակարգերի և մարդկանց մասնագիտական գործունեության կառավարման գործընթացների նմանակեղծային մոդելավորում՝ առաջացող հիմնախնդիրների ուսումնասիրման և լուծման նպատակով:

▪ **Էսսե** – արձակ ստեղծագործություն՝ քննադատության և լրագրության ժանրի որևէ խնդրի ազատ վերլուծություն:

[4] Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

▪ Կլոր սեղան – ինքնուրույն աշխատանքի ձևին բնորոշ է թեմատիկ բանավեճի համադրումը խմբային աշխատանքի հետ:

▪ Կոնկրետ իրավիճակների վերլուծություն – ուսանողների ակտիվ գոր-ծունեության կազմակերպման ամենաարդյունավետ և տարածված ձևերից մեկն է, որը զարգացնում է մասնագիտական և կեցությանը վերաբերող տարբեր հարցերի վերլուծության կարողությունը:

▪ Նախագծերի մեթոդ – ուսումնաճանաչողական, ստեղծագործական կամ խաղային համատեղ գործունեության տեսակ է, սովորող-գործընկերների միջև, որոնք ունեն ընդհանուր նպատակ և համաձայնեցված միջոցներ՝ ուղղված որևէ խնդրի լուծ-ման կամ որոշակի արդյունքի ձևակերպման:

▪ Հարցի նախապատրաստման մոդել – կամավորության սկզբունքով ընտրված ուսանողն իր նախընտրած հակիրճ ձևով նախապատրաստում է տվյալ առարկայից քննության կամ ստուգարքի հարցերի իր պատասխանների փաթեթը: Քննությունից (ստուգարքից) 1 շաբաթ առաջ նա հանձնում է փաթեթը դասախոսին, որը ստուգում է այդ նյութերը և որոշում դրանց համապատասխանությունը տվյալ առարկայի բովանդակությանը:

▪ Ինքնուրույն աշխատանք համացանցում – նոր տեղեկատվական տեխ-նոլոգիաները կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով՝ համացանցում անհրաժեշտ տեղեկատվության որոնման համար, երկխոսություն համացանցում, թեմատիկ ցանցային էջերի օգտագործում:

▪ Աշխատանքային տետր – նախատեսված է ուսանողների ինքնուրույն աշխատանքների համար և թույլ է տալիս գնահատել ուսումնական նյութի յուրացման աստիճանն ուսանողների կողմից:

▪ Զեկույց – որևէ գիտական կամ հետազոտական թեմայի շուրջ կատարած եզրակացությունների, ստացած արդյունքների ներկայացում ուսանողի կողմից:

▪ Հարցազրույց – վերահսկողության միջոց, որը կազմակերպվում է որպես տարիքային զրույց դասավանդողի և ուսանողների միջև՝ կապված այնպիսի թեմայի հետ ինչպիսին կարգապահությունն է, և նախատեսված է հստակեցնել ուսանողների գիտելիքների շրջանակը կոնկրետ թեմայի, հարցի վերաբերյալ:

**8. Դասավանդման մեթոդներներն են՝**[5] հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, *թեմատիկ սեմինար*, սեմինար-բանավեճ, գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք՝ խմբային աշխատանք, ուսուցում գործողությամբ (action learning), իրավիճակային խնդիրների վերլուծություն, գործարար խաղեր. . . .

**9. Ուսումնառության մեթոդներն են**[6]՝ մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, ալգորիթմների և հրահանգների կազմում, աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման սխեմաների կազմում, փորձի/հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում:

[5] Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:
[6] Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների[7].

| հ/հ | Թեմա (բաժին) | Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | դասախոսություն | սեմինար պարապմունք | գործնական աշխատանք | լաբորատոր աշխատանք | ինքնուրույն աշխատանք |
| 1. | Տարիքային հոգեբանության ուսումնասիրման առարկան, օբյեկտը, նպատակը, մեթոդները, խնդիրները: | 2 | | | | |
| 2. | Տարիքային պարբերականացման հայեցակարգը. Տարիքային ժամանակաշրջանները անձի տեսությունների տեսանկյունից (Զ. Ֆրեյդ, Է. Էրիկսոն, Ջ. Պիաժե): Տարիքային ճգնաժամերի հայեցակարգը: | | | 2 | | |
| 3. | Տարիքային հոգեբանության մեթոդները: | | | 2 | | |
| 4. | Վաղ և նախադպրոցական տարիքի հոգեբանություն | 2 | | | | |
| 5. | Կրտսեր դպրոցական տարիքի հոգեբանություն | | | 2 | | |
| 6. | Դեռահասության տարիքի հոգեբանություն: | 2 | | 2 | | |
| 7. | Պատանեկության տարիքի հոգեբանություն | 2 | | 2 | | |

[7] Նման է օրացուցային պլանին

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 8. | Մարդու հոգեկան զարգացման առանձնահատկությունները հասունության և ծերացման ժամանակաշրջաններում | | | 2 | | |
| 9. | Զարգացման վրա ազդող գործոնները, ուսումը և ուսուցումը | 2 | | | | |
| 10. | Դաստիարակությունը, ընտանիքը և զարգացումը | | | 2 | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | **10** | | **14** | | |

### 11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

| հ/հ | Անվանումը/հեղինակ | Հրատարակության տարի |
|---|---|---|
| **Պարտադիր գրականություն (ՊԳ)** | | |
| 1. | Габай Т.В. Педагогическая психология. Учебник. – М.: Академия, 2014. – 240 с. | |
| 2. | Исаев Е.И. Педагогическая психология. Учебник для бакалавров. – М.: Юрайт, 2014. – 347 с. | |
| 3. | Мендель Б.Е. Педагогическая психология. Учебное пособие. – М.: КУРС, ИНФРА- М, 2014. – 368 с | |
| 4. | Гуружалов В.А. Педагогическая психология. Учебник для бакалавров. – М.: Юрайт, 2014. – 493 с. | |
| 5. | Кулагина И.Ю., Колюцкий В.Н. Психология развития и возрастная психология. – М.: Академический проект, 2013. – 420 с. | |
| 6. | Самыгин С.И., Гончарова Н.Г., Волочай А.В. Психология развития, возрастная психология дл студентов вузов. – Р./Д.: Феникс, 2013. – 221 с. | |
| 7. | Хухлаева О.В., Зыков Е.В., Бубнова Г.В. Психология развития и возрастная психология. – М.: Юрайт-Издат, 2013. – 367 с. | |
| 8. | Шаповаленко И.В. Психология развития и возрастная психология. – М.: Юрайт- Издат, 2013. – 567 | |
| 9. | Белоусова А.К., Крищенко Е.П. Дроздова И.И. Возрастная психология. – Р./Д.: Феникс, 2013. – 592 | |

| | | |
|---|---|---|
| 10. | Хилько М.Е. Возрастная психология. Краткий курс лекций. – М.: Юрайт-Издат, 2013. – 197 с. | |
| 11. | Обухова Л.Ф. Возрастная психология. – М.: Юрайт-Издат, 2012. – 460 с. | |
| | | |
| Լրացուցիչ գրականություն(ԼԳ) | | |
| 1. | Кулагина И.Ю. Педагогическая психология. – М.: Педагогический проект, 2011. – 314 с. | |
| 2. | Абрамова Г.С. Возрастная психология. – М.: Юрайт-Издат, 2010. – 811 с. | |
| 3. | Гамезо М.В., Петрова Е.А., Орлова Л.М. Возрастная и педагогическая психология. – М.: Педагогическое общество России, 2009. – 512 с. | |
| 4. | Волков Б.С., Волкова Н. Возрастная психология. В 2-х частях. – М.: ВДАДОС, 2010. – 343 с. | |
| 5. | Демидова И.Ф. Педагогическая психология. – М.: Педагогический проект, 2006. – 224 с. | |
| 6. | Крайг Грейс. Психология развития. – С-Пб, 2000. | |
| 7. | Кулагина И.Ю. Возрастная психология: развитие ребенка от рождения до 17 лет. – М., 1998. | |
| 8. | Мухина В.С. Возрастная психология: феноменология развития, детство, отрочество. – М., 1999. | |
| 9. | Мухина В.С. Детская психология. – М., 1999. | |
| 10. | Немов Р.С. Психология. Кн.2. – М., 1994. | |
| 11. | Обухова Л.Ф. Возрастная психология. – М., 2000. | |
| 12. | Абрамова Г.С. Практикум по возрастной психологии.: Учеб. пособие для студентов студ. вузов. М.: Академия, 1999. | |
| 13. | Акимова М.К., Козлова В.Т. Психологическая коррекция умственного развития школьников: Учеб.пособие для студентов пед. вузов. М.:"Академия", 2000. | |
| 14. | Бадмаев Б.Ц. Психология в работе учителя: В 2-х кн. М., 2000. | |
| 15. | Блонский П.П. Психология младшего школьника. М.: Академия педагогических и социальных наук, 1997. | |
| 16. | Алферов А. Д. Психология развития школьника: Учеб. пособие для студ. вузов Ростов н/Д: Феникс, 2000. | |
| 17. | Возрастная и педагогическая психология: Хрестоматия: Сост.И.В.Дубровина, А.М.Прихожан, В.В.Зацепин. – М., 1999. | |

| | | |
|---|---|---|
| 18. | Волков Б.С, Волкова Н.В. Детская психология в вопросах и ответах. М., 2002. | |
| 19. | Волков Б.С. Психология ранней юности: Учеб. пособие для студ. пед. вузов. М.: Сфера, 2001. | |
| 20. | Выготский Л.С. Педагогическая психология. – М., 1991. | |
| 21. | Волков Б.С. Психология младшего школьника: Учебное пособие / Б. С. Волков. М.: Пед. общ-во России, 2002. | |
| 22. | | |
| 23 | | |
| Համացանցային տեղեկատվական պաշարներ (ՀՏՊ)/ Էլեկտրոնային աղբյուրներ (ԷԱ) | | |
| 1. | Зимняя И.А. Педагогическая психология.// http://psychlib.ru/mgppu/zim/zim-001-.htm | |
| 2. | Гамезо М., Петрова Е., Орлова Л. Возрастная и педагогическая психология// http://www.gumer.info/bibliotek_Buks/Pedagog/gamez/index.php | |
| 3. | Возрастная и педагогическая психология (краткий текст лекций)// http://www.superinf.ru/view_helpstud.php?id=216 | |
| 4. | Давыдов В. В. и др. Возрастная и педагогическая психология.// http://elib.gnpbu.ru/text/vozrastnaya-pedagogicheskaya- psihologiya_petrovskogo_1979/go,0;fs,1/ | |
| 5. | Петровский А.В. Возрастная и педагогическая психология// http://www.klex.ru/gak | |
| 6. | Педагогическая психология// http://www.syntone.ru/library/books/content/3318.html?current_book_page=2 | |
| | | |
| | | |

## 12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

### 12.1 Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | *Թեմա* | Ուսումնասիրվող հարցեր | *Ժամաքանակ* | Գրականություն[8] |
|---|---|---|---|---|
| 1. | **Տարիքային** | 1. Տարիքային հոգեբանության կայացման պատմական ակնարկ: | **2** | |

[8] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

| | | | | |
|---|---|---|---|---|
| | **հոգեբանության առարկան, խնդիրները, միջառարկայական կապերը:** | *2.* Հոգեբանական հետազոտման սկզբունքները: | | |
| 2. | **Տարիքային ժամանակաշրջանները անձի տեսությունների տեսանկյունից (Զ. Ֆրեյդ, Է. Էրիկսոն, Ջ. Պիաժե): Տարիքային ճգնաժամերի հայեցակարգը.** | 1. Երեխայի զարգացման չորս հիմնական օրենքներ L.S. Վիգոտսկի. ցիկլայնություն (ժամանակի բարդ կազմակերպում), էվոլյուցիայի և ինվոլյուցիայի գործընթացների համադրություն: Զգայունություն, Փոխհատուցում:<br>Կենսաբանական գործոն (ժառանգականություն, երեխայի կյանքի նախածննդյան շրջանի ընթացքի առանձնահատկությունները).<br>Սոցիալական գործոն (միջավայր - անմիջական սոցիալական միջավայր, հասարակություն, որտեղ երեխան մեծանում է, նրա մշակութային ավանդույթները, գաղափարախոսությունը:<br>Հակասություններ՝ կարիքների և պայմանների միջև; երեխայի կարիքների և կարողությունների միջև. Հոգեսեքսուալ զարգացման փուլերը.<br>Հոգեսոցիալական զարգացման փուլերը.<br>Տարիքային պարբերականացում Ֆիզիկական տարիք և հոգեբանական տարիք փոփոխություններ: | 2 | |
| 3. | **Տարիքային հոգեբանության մեթոդները** | 1. Համեմատական, երկայնակի և համալիր մեթոդներ:<br>2. Դիտում և ինքնադիտում:<br>3. Էքսպերիմենտալ մեթոդներ (բնական, լաբորատոր, ձևավորող գիտափորձ),<br>4. Հոգեախտորոշիչ մեթոդները (թեստ, անկետա, հարցաշար, սոցիոմետրիա, զրույց և հարցազրույց),<br>5. Գործունեության արդյունքների վերլուծության մեթոդները<br>6. Կենսագրական մեթոդները: | 2 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4. | **Ուսուցման հոգեբանական հիմունքները** | Զարգացման և ուսուցման միջև կապը<br>Անձի կամ անհատականության ձևավորման գործընթաց, որն իրագործվում է նրա սոցիալականացման և կրթության արդյունքում յուրաքանչյուր փուլում նոր որակների ի հայտ գալով | 2 | |
| 5. | **Մանկավարժական փոխազդեցության և հաղորդակցության հոգեբանական հիմքերը.** | Կրթությունը սոցիալ-պատմական փորձի նպատակային փոխանցման գործընթաց է. գիտելիքների, հմտությունների ձևավորման կազմակերպում. Կրթության բովանդակության և մտավոր զարգացման կապը. Կրթության առաջատար դերը երեխայի զարգացման գործում. Պրոքսիմալ զարգացման գոտի, փաստացի զարգացման գոտի։ Դրանց տեսական և գործնական նշանակությունը։ | 2 | |
| 6. | **Վաղ և նախադպրոցական տարիքի հոգեբանություն** | Վաղ և նախադպրոցական տարիքի հոգեբանություն երեխաների հոգեբանական բնութագիրը: Գործունեություն և ուշադրություն: Իմացական։ գործունեություն: Տարածական կողմնորոշում: Մտածողություն, խոսք և հաղորդակցում: Անձի հուզակամային ոլորտի ձևավորում: | 2 | |
| 7. | **Կրտսեր դպրոցական տարիքի հոգեբանություն** | Կրտսեր դպրոցական տարիքի հոգեբանություն երեխաների հոգեբանակն բնութագիր:<br>Կրտսեր դպրոցական տարիքի հոգեբանություն երեխաների զարգացման առանձնահատկությունները: | 2 | |
| 8. | **Պատանեկության տարիքի հոգեբանություն** | Պատանեկության տարիքի հոգեբանություն երեխաների հոգեբանական բնութագիրը: Գործունեություն և ուշադրություն: Իմացական։ գործունեություն: Տարածական կողմնորոշում: Մտածողություն, խոսք և հաղորդակցում: Անձի հուզակամային ոլորտի ձևավորում: | 2 | |
| 9. | **Մարդու հոգեկան զարգացման առանձնահատկություններ** | Հասունության և ծերացման ժամանակաշրջաններում մաղկանց հոգեբանական բնութագիրը: Գործունեություն և ուշադրություն: Իմացական։ գործունեություն: Տարածական կողմնորոշում: | 2 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | **ը հասունության և ծերացման ժամանակաշրջաններում** | Մտածողություն, խոսք և հաղորդակցում: Անձի հուզակամային ոլորտի ձևավորում: | | |
| 10. | **Դաստիարակությունը, ընտանիքը և զարգացումը** | • Ավտորիտար մոտեցում<br>• Ամենաթող(ական) մոտեցում<br>• Դեմոկրատական (ժողովրդավարական) մոտեցումը<br>• Համագործակցային, չեզոք կամ հակամարտային<br>Դաստիարակության տարբեր ոճերը՝<br>1. ազատություն (վերասկողության բացակայություն) և թշնամանք,<br>2. թշնամանք և վերասկողություն,<br>3. վերահսկողություն և սեր,<br>4. ազատություն և սեր: | **2** | |

**12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ**

| **հ/հ** | *Թեմա* | Ուսումնասիրվող հարցեր | *Ժամ աքան ակ* | Ստուգման ձևը | Գրականությո ւն[9] |
|---|---|---|---|---|---|
| 1. | **Հոգեկանի զարգացման գործոնները, շարժիչ ուժերը, տարբեր տեսական մոտեցումները:** | Հոգեկանի զարգացման մեխանիզմները, սոցիալական իրադրություն առաջատար գործունեություն, հոգեբանական նորագոյացություններ, զարգացման տարիքային ճգնաժամ: | 2 | ինքն իրեն, խումբը պատասխանող ին, դասախոսն ամբողջացնու | |

[9] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | մ է | |
| 2. | **Պրենատալ և նորածնության տարիքային փուլերի, շրջանների բնութագիրը, Էմբրիոնի և պտղի զարգացումը, նորածինի ոչ պայմանական ռեֆլեքսների բնութագիրը, պայմանական ռեֆլեքսների առաջացումը, սեննսոռային ոլորտի զարգացումը, աշխուժացման բարդույթ** | • Հոգեբանական երևույթները ներարգանդային զարգացման շրջանում,<br>• Էմբրիոնի և պտղի զարգացումը,<br>• Նորածնության շրջանի ոչ պայմանական ռեֆլեքսների խմբերը,<br>• Պայմանական ռեֆլեքսների առաջացումը,<br>• Սենսորային ոլորտի զարգացումը,<br>• Աշխուժացման կոմպլեքս,<br>• Հուզական սմբիոզի դերը երեխայի հոգեկանի զարգացման գործում,<br>• Ընկալումը և շարժողական գործողությունների զարգացումը: | 2 | ինքն իրեն, խումբը պատասխանո դին, դասախոսն ամբողջացնու մ է | |
| 3. | **Երեխայի հոգեկանի զարգացումը մանկիկության տարիքային փուլում** | • Մանկիկի հոգեկանի զարգացման առանձնահատկությունները,<br>• Թոթովանքը որպես խոսքի զարգացման նախադրյալ,<br>• Հուզական սիմբիոզի դերը երեխայի հոգեկանի զարգացման գործում,<br>• Հուզաաֆեկտիվ ոլորտի առանձնահատկությունները,<br>• Մանկիկի կողմնորոշումը շրջապատող միջավայրում,<br>• Շփումը մեծահասակի հետ,<br>• 1 տարեկանի ճգնաժամը: | 2 | ինքն իրեն, խումբը պատասխանո դին, դասախոսն ամբողջացնու մ է | |
| 4. | **Վաղ մանկական տարիքի հոգեբանական բնութագիրը** | • Առաջատար գործունեությունը և հոգեկան նորագոյացությունները,<br>• Առաջատար գործունեության դերը երեխայի կոգնիտիվ ոլորտի զարգացման գործում,<br>• Զգայությունների և ընկալման զարգացման առանձնահատկությունները,<br>• Խոսքի զարգացումը, էտապները, | 4 | ինքն իրեն, խումբը պատասխա նողին, դասախոսն ամբողջացն ում է | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | • Մտածողության զարգացումը,<br>• Հուզաաֆեկտիվ ոլորտի զարգացումը,<br>• Դրդապատճառային ոլորտի ձևավորման առանձնահատկությունները,<br>• «Ես» կոնցեպցիայի ձևավորումը,<br>• Կյանքի երրորդ տարվա ճգնաժամ, | | | |
| 5. | **Նախադպրոցական տարիքի հոգեբանական բնութագիրը** | • Նախադպրոցականի ֆիզիկական զարգացումը<br>• Առաջատար գործունեություն, հոգեկան նորագոյացություններ<br>• Խաղային գործունեության դերը նախադպրոցականի հոգեկանի զարգացման գործում,<br>• Ճանաչողական ոլորտի զարգացման առանձնահատկությունները,<br>• Խոսքի, լեզվի և մտածողության զարգացումը,<br>• Ընկալման, երևակայության զարգացումը,<br>• Նախադպրոցականի անձի զարգացումը,<br>• Դպրոցին պատրաստվելու հոգեբանական հիմնախնդիրը: | 2 | ինքն իրեն, խումբը պատասխա նողին, դասախոսն ամբողջացն ում է | |
| 6. | **Հոգեկանի զարգացումը և անձնավորության ձևավորումը կրտսեր դպրոցական տարիքում** | • Կրտսեր դպրոցականի անատոմոֆիզիոլոգիական զարգացումը,<br>• Դպրոցական կյանքին երեխայի սկզբնական ադապտացիայի առանձնահատկությունները,<br>• Ուսումնական գործունեությունը որպես առաջատար գործունեություն,<br>• Հոգեկան նորագոյացություններ,<br>• Ուսումնական գործունեության կառուցվածքը,<br>• Ուսումնական գործունեության դրդապատճառները,<br>• Սոցիալական մոտիվների կառուցվածքը, | 2 | ինքն իրեն, խումբը պատասխա նողին, դասախոսն ամբողջացն ում է | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | • Կրտսեր դպրոցականի ճանաչողական գործընթացների զարգացման<br>յուրահատկությունը,<br>• Ուշադրության, ընկալման, հիշողության զարգացումը,<br>• Մտածողության զարգացման փուլերը,<br>• Դրդապատճառային ոլորտի զարգացումը հասակակիցների շփման ընթացքում,<br>• Ուսումնական գործունեության մոտիվացիա,<br>• Իմացական մոտիվների կառուցվածքը,<br>• Սոցիալական մոտիվների կառուցվածքը,<br>• «Ես» կոնցեպցիայի զարգացումը,<br>• Ինքնագնահատականի զարգացումը,<br>• Սոցիալական վարքի զարգացումը դպրոցում, ընտանիքում և հասակակիցների միջև | | | |
| 7. | **Անձի ձևավորումը և զարգացման հոգեբանական առանձնահատկությունները դեռահասության շրջանում** | • Կենսաբանական զարգացումը և հոգեբանական նորագոյացությունները,<br>• Սոցիալական գործոնները որպես դեռահասի հոգեկան զարգացման և անձի ձևավորման առաջատար դետերմինանտներ,<br>• Դեռահասների ճանաչողական ոլորտի զարգացումը:<br>• Դեռահասի վարքի ընդհանուր հոգեբանական բնութագիրը,<br>• Ինքնագիտակցության զարգացումը որպես անձի ձևավորման որակապես նոր փուլ,<br>• Ինքնահաստատման առանձնահատկությունները,<br>• Անձի զարգացման պրոցեսում խմբի, կոլեկտիվի, միջանձնային<br>• Հարաբերությունների առաջատար դերը | 2 | | |
| 8. | **Պատանեկության տարիքի** | • Վաղ պատանեկան տարիքի | 2 | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **հոգեբանական բնութագիրը** | առանձնահատկությունները,<br>• Ինքնագիտակցության զարգացումը,<br>• Արժեքային կողմնորոշումների ձևավորումը,<br>• Ընկերությունը և սերը վաղ պատանեկան տարիքում,<br>• Ապագայի մասին պատկերացումները | | | |
| 9. | **Ուսումնական գործունեության հոգեբանական հիմքերը** | • Ուսումնական գործունեության մոտիվացիա,<br>• Ուսումնական գործունեության կառուցվածքը,<br>• Ուսումնական և ուսուցանող գործ-ների տեսակները,<br>• Ուսուցման պրոցեսի վրա ազդող գործոնները: | 2 | | |
| 10. | **Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների հոգեբանական առանձնահատկությունները** | • Մանկավարժական տեխնոլոգիայի հոգեբանական ասպեկտները,<br>• Ավանդական ուսուցում,<br>• Համագործական ուսուցում,<br>• Մարդասիրական ուսուցում,<br>• Անձնային ուսուցում,<br>• Պրոբլեմային ուսուցում,<br>• Շե բտավորված ուսուցում,<br>• Անհատական ուսուցում,<br>• Համակարգչային ուսուցում,<br>• Զարգացնող ուսուցում: | 4 | | |
| 11. | **Դաստիարակության և ինքնադաստիարակության հոգեբանությունը որպես անձի ձևավորման նպատակաուղղված գործընթաց** | • Ընդհանուր հասկացություն դաստիարակության հոգեբանության մասին,<br>• Մարդու անձը և նրա ձևավորման առանձ-ը,<br>• Մանկական կոլեկտիվը և նրա դաստիարակչական հնարավորությունները,<br>• Անձի բարոյական ոլորտի ձևավորման հոգեբանական հիմքերը,<br>• Դաստիարակության հոգեբանական մեխանիզմները: | 2 | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 12. | **Մանկավարժական գործունեության հոգեբանական հիմքերը** | • Մանկավարժական գործունեության գնահատման հոգեբանական ասպեկտները,<br>• Մանկավարժի անձին ներկայացվող հոգեբանական պահանջները,<br>• Մանկավարժական հաղորդակցման հոգեբ. առ-ըը,<br>Մանկավարժական կառավարման հոգեբանական հիմունքները: | 2 | | |
| | | | | | |

## 13. Գնահատում

Համալսարանում գործում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրառկման հիմնական նպատակներն են՝

- կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, ապահովել գիտելիքների համակողմանի ստուգում, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,
- իրականացնել ինքնուրույն առաջադրանքների, ընթացիկ ստուգումների (ստուգարքներ և քննություններ), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառում հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմների ներմուծման միջոցով՝ ի նպաստ ուսումնառության գործընթացի բարելավման:

Համալսարանում գնահատման գործընթացը կանոնակարգվում է համաձայն գործող կարգի[10]:

### 13.2. Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝

- ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճանի գնահատում դասերին հաճախումների հաշվառման միջոցով՝առավելագույնը 20 միավոր,
- գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 20 միավոր,
- ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,
- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:

### 13.3. Ուսանողների գիտելիքների ստուգում.

Ստուգարքով ամփոփվող դասընթացն ավարտվում է կիսամյակի 2 ընթացիկ ստուգումների միջոցով և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով:

[10]«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ» (ընդունված ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից 30.062022թ.),

**a. Գնահատման չափանիշները[11].**
Դասընթացի կրթական վերջնարդյունքներին հասնելու ընթացքի գնահատում՝

1. Մասնակցությունը գործնական, լաբորատոր աշխատանքներին (գումարային 40միավոր)

- Գնահատման մեթոդը՝
  - Նյութի գիտական, համակարգված ձևակերպում,
  - Ինքնուրույն եզրահանգումներ, սեփական տեսակետի ներկայացում,
  - Նյութը ներկայացնելիս երկու և ավելի գիտական աղբյուրների օգտագործում,
  - Գրաֆիկական պատկերների, աղյուսակների, տեսաներկայացման առկայություն:

2. Ինքնուրույն աշխատանքներ(ընդհանուր գնահատականի 20%-ը գումարային 20միավոր)

- Գնահատման մեթոդը՝
  - Ստեղծագործական մոտեցման առկայություն,
  - Հետազոտական աշխատանքի առկայություն,
  - Ինքնուրույն դատողություններ,
  - Առաջարկություններ:

5. ստուգարք (ընդհանուր գնահատականի 40%-ը, կամ 40 միավոր,)

- Ստուգման ձևը և գնահատման մեթոդը՝

- հարցաշարային ընթացիկ բանավոր:

- Գնահատման չափանիշները՝

- պատասխանել 4 հարցերին /յուրաքանչյուր հարցը 5 միավոր/, վաստակել 20 միավոր:
8 միավոր վաստակելու դեպքում ստանում է դրական գնահատական:

[11] Լրացվում է ըստ ամբիոնի /դասախոսի որոշման

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

**Մասնագիտություն՝** 011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն

/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

**Կրթական ծրագիր՝** 011401.04.6 Ֆիզիկա

/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

**Որակավորման աստիճան՝** մանկավարժության բակալավր

/բակալավր, մագիստրատուրա/

Վանաձոր 2024

Առկա ուսուցման համակարգ

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Դասընթացի թվանիշը, անվանումը** | ՄՀ/բ-057 **Տարիքային և մանկավարժական հոգեբանություն** | | | |
| **Դասընթացին հատկացվող կրեդիտը** | 2 կրեդիտ | | | |
| **Ուսումնառության տարի / կիսամյակ** | 3-րդ կուրս, 2-րդ կիսամյակ | | | |
| **Ժամերի բաշխումը** | Լսարանային | 24 | Դասախոսություն | 10 |
| | | | Սեմինար | |
| | | | Լաբորատոր աշխատանք | |
| | | | Գործնական աշխատանք | 14 |
| | Ինքնուրույն | 36 | | |
| | Ընդամենը | 60 | | |
| **Ստուգման ձևը** | ստուգարք | | | |
| **Դասընթացի նպատակը** | Դասընթացի նպատակն է ձևավորել համապատասխան գիտելիքներ տարիքային հոգեբանության՝ որպես մասնագիտական գործունեության, այլ գիտությունների միջև գոյություն ունեցող կապի, տարիքային հոգեբանության գործնական սկզբունքների և հիմնական ձևերի, ինչպես նաև հիմնական արժեքների վերաբերյալ: | | | |
| **Դասընթացի վերջնարդյունքները** | Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.<br>***Գիտենա*** - Տարիքային և մանկավարժական հոգեբանության առարկայի բովանդակությունը, խնդիրները, հետազոտման մեթոդները, երեխայի հոգեկանի օնտոգենետիկական զարգացման տեսական հայեցակարգերը, հոգեկանի զարգացման մեխանիզմները, օրինաչափությունները, շարժիչ ուժերը, ճգնաժամերը, յուրաքանչյուր տարիքին բնորոշ առաջատար գործունեության տեսակները, հոգեկան նորագոյացությունները, հոգեբ. առանձնահատկությունները, անձի հոգեկանի զարգացման առանձնահատկությունները ուսուցման և դաստիարակության ընթացքում, ուսուցման դաստիարակության ժամանակակից տեխնոլոգիաների | | | |

| | |
|---|---|
| | հոգեբանական հիմքերը, մանկավարժական գործունեության և ուսուցչի անձնավորության հոգեբ. առանձնահատկությունները:<br>*Տիրապետի* - երեխայի հոգեկանի և վարքագծային զարգացման դինամիկայի ըմբռնման և հետազոտման մեթոդներին, ուսումնադաստիարակչական գործընթացում ժամանակակից տեխնոլոգիաների իրականացման հմտություններին, անձնավորության զարգացման գործընթացների արդյունքների կանխատեսման գործիքակազմին:<br>*Կարողանա* - իրականացնել հանրակրթական ուսումնական հաստատություններում երեխայի հոգեկանի զարգացմանը վերաբերող տեսական գիտելիքների կիրառումը, յուրաքանչյուր տարիքի ճանաչողական գործընթացների, հուզակամային, պահանջմունքադրդապատճառային ոլորտների, անձնային որակների առանձնահատկությունների հիման վրա կիրառել ախտորոշելու, բնութագրելու հմտությունները: |
| Դասընթացի բովանդակությունը | **Թեմա 1.** Տարիքային հոգեբանության առարկան, խնդիրները, միջառարկայական կապերը:<br>**Թեմա2.** Տարիքային պարբերականացման հայեցակարգը. Տարիքային ժամանակաշրջանները անձի տեսությունների տեսանկյունից (Զ. Ֆրեյդ, Է. Էրիկսոն, Ջ. Պիաժե): Տարիքային ճգնաժամերի հայեցակարգը:<br>**Թեմա 3.** Տարիքային հոգեբանության մեթոդները:<br>**Թեմա 4.** Վաղ և նախադպրոցական տարիքի հոգեբանություն<br>**Թեմա 5**. Կրտսեր դպրոցական տարիքի հոգեբանություն<br>**Թեմա 6.** Դեռահասության տարիքի հոգեբանություն:<br>**Թեմա 7.** Պատանեկության տարիքի հոգեբանություն:<br>**Թեմա 8.** Մարդու հոգեկան զարգացման առանձնահատկությունները հասունության և ծերացման ժամանակաշրջաններում<br>**Թեմա 9.** Զարգացման վրա ազդող գործոնները, ուսումը և ուսուցումը<br>**Թեմա 10.** Դաստիարակությունը, ընտանիքը և զարգացումը |
| Գնահատման մեթոդները և չափանիշները | Դասընթացի կրթական վերջնարդյունքներին հասնելու ընթացքի գնահատում՝<br><br>1. Մասնակցությունը գործնական, լաբորատոր աշխատանքներին |

| | |
|---|---|
| | (գումարային 40միավոր)<br><br>▪ Գնահատման մեթոդը՝<br>- Նյութի գիտական, համակարգված ձևակերպում,<br>- Ինքնուրույն եզրահանգումներ, սեփական տեսակետի ներկայացում,<br>- Նյութը ներկայացնելիս երկու և ավելի գիտական աղբյուրների օգտագործում,<br>- Գրաֆիկական պատկերների, աղյուսակների, տեսաներկայացման առկայություն:<br>3. Ինքնուրույն աշխատանքներ (ընդհանուր գնահատականի 20%-ը գումարային 20միավոր)<br><br>▪ Գնահատման մեթոդը՝<br>- Ստեղծագործական մոտեցման առկայություն,<br>- Հետազոտական աշխատանքի առկայություն,<br>- Ինքնուրույն դատողություններ,<br>- Առաջարկություններ:<br><br>5. Քննություն (ընդհանուր գնահատականի 40%-ը, կամ 40 միավոր, երկու ընթացիկ քննությունների գումարային արժեք)<br><br>▪ Ստուգման ձևը և գնահատման մեթոդը՝<br>- հարցաշարային ընթացիկ բանավոր քննություն:<br><br>▪ Գնահատման չափանիշները՝<br>- պատասխանել 4 հարցերին, յուրաքանչյուր հարցը 5 միավոր և վաստակել 20 միավոր:<br>8 միավոր վաստակելու դեպքում ստանում է դրական գնահատական: |
| Գրականություն | **Պարտադիր**<br>1. Габай Т.В. Педагогическая психология. Учебник. – М.: Академия, 2014. – 240 с.<br>2. Исаев Е.И. Педагогическая психология. Учебник для бакалавров. – М.: Юрайт, 2014. – 347 с.<br>3. Мендель Б.Е. Педагогическая психология. Учебное пособие. – М.: КУРС, ИНФРА- М, 2014. – 368 с.<br>4. Гуружалов В.А. Педагогическая психология. Учебник для бакалавров. – М.: Юрайт, 2014. – 493 с.<br>5. Кулагина И.Ю., Колюцкий В.Н. Психология развития и возрастная психология. – М.: Академический проект, 2013. – 420 с.<br>6. Самыгин С.И., Гончарова Н.Г., Волочай А.В. Психология |

| | |
|---|---|
| | развития, возрастная психология дл студентов вузов. – Р./Д.: Феникс, 2013. – 221 с.<br>7. Хухлаева О.В., Зыков Е.В., Бубнова Г.В. Психология развития и возрастная психология. – М.: Юрайт-Издат, 2013. – 367 с.<br>8. Шаповаленко И.В. Психология развития и возрастная психология. – М.: Юрайт- Издат, 2013. – 567 с.<br>9. Белоусова А.К., Крищенко Е.П. Дроздова И.И. Возрастная психология. – Р./Д.: Феникс, 2013. – 592 с.<br>10. Хилько М.Е. Возрастная психология. Краткий курс лекций. – М.: Юрайт-Издат, 2013. – 197 с.<br>11. Обухова Л.Ф. Возрастная психология. – М.: Юрайт-Издат, 2012. – 460 с.<br><br>Լրացուցիչ<br>1. Кулагина И.Ю. Педагогическая психология. – М.: Педагогический проект, 2011. – 314 с.<br>2. Абрамова Г.С. Возрастная психология. – М.: Юрайт-Издат, 2010. – 811 с.<br>3. Гамезо М.В., Петрова Е.А., Орлова Л.М. Возрастная и педагогическая психология. – М.: Педагогическое общество России, 2009. – 512 с.<br>4. Волков Б.С., Волкова Н. Возрастная психология. В 2-х частях. – М.: ВДАДОС, 2010. – 343 с.<br>5. Демидова И.Ф. Педагогическая психология. – М.: Педагогический проект, 2006. – 224 с.<br>6. Крайг Грейс. Психология развития. – С-Пб, 2000.<br>7. Кулагина И.Ю. Возрастная психология: развитие ребенка от рождения до 17 лет. – М., 1998.<br>8. Мухина В.С. Возрастная психология: феноменология развития, детство, отрочество. – М., 1999.<br>9. Мухина В.С. Детская психология. – М., 1999.<br>10. Немов Р.С. Психология. Кн.2. – М., 1994.<br>11. Обухова Л.Ф. Возрастная психология. – М., 2000.<br>12. Абрамова Г.С. Практикум по возрастной психологии.: Учеб. пособие для студентов студ. вузов. М.: Академия, 1999.<br>13. Акимова М.К., Козлова В.Т. Психологическая коррекция умственного развития школьников: Учеб.пособие для студентов пед. вузов. М.:"Академия", 2000.<br>14. Алферов А. Д. Психология развития школьника: Учеб. пособие для студ. вузов Ростов н/Д: Феникс, 2000. |

| | |
|---|---|
| | 15. Бадмаев Б.Ц. Психология в работе учителя: В 2-х кн. М., 2000.<br>16. Блонский П.П. Психология младшего школьника. М.: Академия педагогических и социальных наук, 1997.<br>17. Возрастная и педагогическая психология: Хрестоматия: Сост.И.В.Дубровина, А.М.Прихожан, В.В.Зацепин. – М., 1999.<br>18. Волков Б.С, Волкова Н.В. Детская психология в вопросах и ответах. М., 2002.<br>19. Волков Б.С. Психология младшего школьника: Учебное пособие / Б. С. Волков. М.: Пед. общ-во России, 2002.<br>20. Волков Б.С. Психология ранней юности: Учеб. пособие для студ. пед. вузов. М.: Сфера, 2001.<br>21. Выготский Л.С. Педагогическая психология. – М., 1991.<br>22. Хрестоматия по возрастной психологии. Учеб.пос. – М.: Изд-во Моск.соц-психолог.института: Воронеж, 2003.Шахова И.П. Практикум по лабораторным работам курса “Возрастная психология”. - М, 2002. |